«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 81. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունը

1. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Երևանի ավագանին, որն իրավազոր է ստուգելու յուրաքանչյուր բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջելու հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:

2. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևանի բյուջեից:

3. Պետությունը Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է ~~Վերահսկիչ պալատի~~ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջոցով՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: